

հեղեղեցույս ամէն: Ընդ նմին եւ զկազմող սուրբ աւետարանիս զգեղազարդ եւ ըզհեղա-հոգի կրանաւորքս զտէր Թադէոս որ կազմեաց զսա յիշեալիք յաղաւթն ձեր եւ աստուած զձեզ յիշէ յիւր արքայութեանն, ամէն:

11.

ԱԻԵՏԱՐԱՆ

299 = 1334:

ԿԱԶՄ՝ երեսը միայն կաշի անցուած է. որ հինգսո՞ւ ու գրեթէ քայքայուելու վրայ է: — Նիւթ՝ բուլք բամպակեայ. կանանչ գորշագոյն: — Թնիւթ՝ 300 կամ 600 էջ: — ՄեծՈԻԹԻՆ՝ 17.5 × 12.5 հրամ. — ԳիՐ՝ բոլորգիր, միջին մաքուրեամբ, սեւ մեկամ: — ԳՐՈԻԹԻՆ՝ երկսիւնակ, 13 × 9 հրամ. սիւնակաց միջեր եղած բացութիւնն 1 հրամ.: — ՏՈՂՔ՝ 19—20 — ԼՈԻՍԱՆՑԱԶԱՐԳՐ՝ կամ ամէն գլխոյ լուսանցքը, բայց ոչ անցնչափ արուեստիւ, այլ պարզ: — ԽՈՐԱՆՔ՝ բուլ 4, քղ. 1ա, 82ա, 136ա, 231ա: — ԹՆԶՆԱԳԻՐՔ եւ ԶԱՐԴԱՆՔ՝ ԳԻՐՔ եւ չորս աւետարանաց ա. գլուխներու ա. տուրք: — ԳԼԽԱԳԻՐՔ՝ կարմրաւ եւ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 81, քղ. 135բ, 230բ, 300: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ոչ անցնչափ մաքուր պահուած: — ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ՝ քղ. 299ա: — ԺԱՄԱՆԱԿ ԳՐԶՈՒԹԵԱՆ՝ 299 (= 1334): — ԳՐԻԶ՝ Սերովբէ: — ՏԵՂԻ՝ Այլանց անապատ: — ՏԵՐ՝ վասիլ քանակ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՆ՝ մատենիս սկիզբէն քղ. 1ա—7բ բուլքերն վարի կողմէն գրեթէ փնացած եւ, ինչպէս նաեւ մէջ տեղի բուլքերէն ալ կան փնացած:

Մատենան է Աւետարան:

1. Թղ. 1ա—80բ, Աւետարան Մատթէոսի:
2. Թղ. 82ա—135ա, Աւետարան Մարկոսի:
3. Թղ. 136ա—230ա, Աւետարան Ղուկասու:
4. Թղ. 231ա. 298բ. Աւետարան Յովհաննու:

ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ.

(Գլխաւոր յիշատակարան): Թղ. 299ա, Փառք ամենասուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեանն Հաւր եւ որդւոյ եւ սուրբ Հոգւոյ յաւիտեանս ամէն: Յամբ եւթն հարեւորդի ութսներորդի երրորդի, (= 1334). Թուականիս հայոց տումարի, գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ եռաթշուառ անձին

Սէրուրէի ի խնդրոյ պատուելի քահանայի Վասիլ ի վայելումն եւ ի սիրոյն անձին իւրոյ, եւ յետ ելից իւրոյ յիշատակ հոգւոյ իւր եւ ծնողաց իւրոյ: Գրեցաւ սա ի Թաւառութեան Հայոց Լեւոնի, եւ ի հայրապետութեան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յակովբայ եւ այլ բազմահաւաք սրբոյ: Արդ որք աւակաւ ի սմանէ մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ զրոյի սորա եւ ծնողաց իւրոյ եւ ամենայն աղագատոհմից, կենդանեաց եւ ննջեցելոց, այլ եւ ստացողի սորա Վասիլ քահանայի եւ ծնողաց իւրոյ, եւ ամենայն զարմից, եւ որ յիշեղ զմեզ եւ մեղաց թողութիւն խնդրէք թողցին զյանցանքն ձեր որ խնամով պահէ զզիրքս, աւրհնեցի յամենայն սրբոյ: Նաեւ զեղկելիս զանարժան նուստ ծառայս զԻսաիթ ծաղկաւոյս յիշեալիք եւ զպատուելի քահանայ զՊաւղոս, եւ զուր յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աւրհնեալ ընդ հաւր եւ ընդ որդւոյ եւ սուրբ հոգւոյն սցծմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

2. (վերջին գրուածք մը), Ստացողի սուրբ զրոյս սուրբ եւ Աստուածարան Աւետարանիս: Ստացաւ ի հալալ վաստակէն յիշատակ Սաղաղան եւ որդին Կ(իր)ակոս եւ կողակից տիկինին եւ Սառային, եւ որդոյ Սենուկին, Մանուկին, Ման Գուրախին եւ հաւատար ննջեցելոց ամէն. Թվին Ռ (մնացեալ մասը անընթեռնի եղած է):

12.

ԱԻԵՏԱՐԱՆ

ՈԾԲ = 1203:

ԿԱԶՄ՝ հին արեւելեան տախտակեայ կաշեպատ. ներքին երկու երեսներուն վրայ աղյաս փակցուած է: — Նիւթ՝ մագաղաք դեղնագոյն: — Թնիւթ՝ 293 կամ 586 էջ: — ՄեծՈԻԹԻՆ՝ 22.5 × 15.5 հրամ.: — ԳիՐ՝ բոլորգիր. շատ մաքուր, սեւ մեկամ: — ԳՐՈԻԹԻՆ՝ 15 × 10.5 հրամ. սիւնակաց միջեր եղած բաց միջոցն է 1 հրամ.: — ՏՈՂՔ՝ 19—20: — ԼՈԻՍԱՆՑԱԶԱՐԳՐ՝ բուլ 204, լաւ գործեր եւ: — ԽՈՐԱՆՔ՝ Եւսեբեայ 3, եւ ԿԻՍԱՆՔ՝ աւետարաններու 4 հատ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 6բ, 139բ, 293բ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահուած է: — ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ՝ քղ. 226բ, 292ա, 293ա: — ԺԱՄԱՆԱԿ ԳՐԶՈՒԹԵԱՆ՝ ՈԾԲ, (= 1203): — ԳՐԻԶ՝ վարդան վարդապետ: — ՏԵՐ՝

Ս. ուխտն Դրազարկի. որ կոչի Անդրեանանց: — ՏԵՂԻ՝ Դրազարկ անապատ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՆ՝ սկիզբն եւ վերջն երկուսն մագաղաքեայ պահպանակներ կան երկաթագիր, եւ հասարակ քրքեր ալ կան դատարկ: Ամէն գլխոյ ուղղակի տողերն կապոյտ մեկամ, եւ ամէն սկզբնաւոր գլխագիր եւ կապոյտ մեկամ:

Մատենան է՝ Աւետարան:

1. Թղ. 1—2ա. Խորանք Եւսեբի:
2. Թղ. 2բ—6ա. Համաձայնութիւնք, զուեաւոր եւ նկարուած շրջանակի մէջ առնուած են առանց խորանի:
3. Թղ. 7ա. Աւետարան Մատթէոսի:
4. Թղ. 89ա. Աւետարան Մարկոսի:
5. Թղ. 140ա. Աւետարան Ղուկասու:
6. Թղ. 227ա—291բ. Աւետարան Յովհաննու:

ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆՔ.

1. Թղ. 224բ. (այլ գրիչ). Զվերջին ստացաւ սուրբ աւետարանիս զՄկրտիչ երեսփոխանն եւ զկողակիցն իւր զՍաթուհ փաշայն, որ ստացան զսա ի յարդար վաստակոց իւրեանց, եւ եղին յիշատակ ի սուրբ Աստուածածնին իւրեանց ծնողացն, հաւրն իւրոյ Յովանիսին, եւ մաւրն Յեւստ մեղիւրին, եւ եղբարցն Շնոֆոր պարոնին, եւ Ղաւրին, եւ եղբարցն Շնոֆոր քահանայն, եւ քրքերցն Փաշաբաշին, եւ Յակոբին, եւ քրքերցն Փաշաբաշին, Շնոֆորին, Այ մէլիքին, Մուղալին, Խթայ մէլիքին, եւ որդւոցն Խաւրէին, Զինարին, եւ դստերացն Մուղալին, Տուսային, Փաշային, եւ զեռարոյս զաւակացն Խաւրապետէ եւ Յովանիսին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արացէ, ամէն: Մանիք սուրբ քահանայք եւ ժողովուրդք, որ չունի ոք իշխանութիւն ոչ յիմոց եւ յաւատարաց, հանել զսուրբ աւետարանս ի սուրբ Աստուածածնէ, եւ ով ոք յանդիմանի եւ հանել ջանայ ինքն իւրայովքն ելցէ յարքայութենէն:

2. Թղ. 292ա. (Գլխաւոր յիշատակարան):

Փառք... Գրեցաւ սուրբ աւետարանս որ է հրամանք եւ աւրէնք փրկչին մերոյ Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ եւ Տեառն մերոյ, ի Թուականութեան հայոց ի ՈԾԲ (= 1203) ի զերահոգի անապատիս որ կոչի Դրազարկ, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնիս ձեռամբ անարժան եւ մեղաւոր քահանայիս եւ անպիտան կրանաւորիս Վարդանայ, որ ստացա զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ քրքեր որդւոյ իմոց

Բասիլ, եւ շնորհեցի սուրբ ուխտին որ կոչի Անդրեանանց ի սուրբ եւ ի մայր եկեղեցին սիրովն յիշատակ ինձ եւ վերադոյն գրելոցն: Եւ զի ձրի պարգեւեցի զսա այնմ սրբոյ եկեղեցւոյ, մի ոք յանդիմանցի հանել զսա անտի, թէ առաջնորդ իցէ եւ թէ եղբայր, եւ թէ զինչ եւ իցէ մարդ, եւ որ յանդիման եւ հանէ զսա ի յայնմ եկեղեցւոյ որ է սիրովն եւ հանէ զսա ի յայնմ եկեղեցւոյն նորա Աստուծոյ ի վերին սիրովն որ ժողովարանն է ամենայն հաւատացելոց սրբոյ, բայց թէ երկու լինիցի յաիշատակոյս զի զգուշացուցանիցեն զի մի երթիցէ զերեւ, եւ ապա ընդ խաղաղանայն փութով յեկեղեցին դարձուցեն, եւ կամ վասն ուխտին կարեաց կամ առաջնորդին ի պէտս իրիք տարցի, եւ դարձեալ արագ ի տեղի իւր բերցեն, ապա աւտարաց առ որս երկու կայցէ կորստեան մի տացի, բայց եթէ աւրինակ ոք խնդրեցէ մի արդելուք զի յընտիր եւ յանձան աւրինակէ է զրա՞ծ: Բայց աղաչեմ զամենեւեան որք ընթեռնոյք կամ զաղափար առնոյք զսա, յիշեալիք զստապեալ ստացողս, եւ զորոս վարդան եւ զառաջապեալ ծնաւոյն իմ եւ զԲասիլն եւ զսիրելի եղբայր իմ զԱրեւիկ, եւ զԲասիլն եւ զսիրելի եղբայր իմ զԱրեւիկ, եւ զձեզ զիշողս եւ զմեզ Տէր յիշեցէ, եւ յեղբարց վանիցդ որ ոք խնամ տարցի սմա որ ոչ ելանէ յեկեղեցւոյդ, աւրհնեալ եղիցի յԱստուծոյ եւ ի մէջ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք:

3. Թղ. 293ա. (այլ գրիչ). Ո՛հ զմեղաւք զատապարտեալ կաղմաւղ սորա զԱռաքել Հնազանդենց, եւ զճնաւոյն իմ, եւ զհաւաքատան իմ զկարապետ քահանայ եւ զՊաւղոս սրկ. եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ, եւ զեղբար որդեակն իմ զԹորոս զհանդուցեալսն ի Քրիստոս աղաչեմ յիշել ի տէր, ի թվ 219 (= 1274) կազմեցաւ սա:

(Այլ գրիչ): Ի թվին ՌձԻՂ (= 1677) Նոյեմբեր ԻԴ կազմեցաւ սուրբ աւետարանս, ի մայրաքաղաք Կեսարիոյ, ձեռամբ մեղաւոր մած Գրիգոր անարժանի, աղաչեմ յիշել միով Աստուած ողորմեայիս:

13.

ԱԻԵՏԱՐԱՆ

ՌԴ = 1555:

ԿԱԶՄ՝ հին արեւելեան, տախտակեայ կաշեպատ: — Նիւթ՝ բուլք պինդ, փայլուն եւ ողորպատ:

կեայ: — ԹՈՒՂԹՔ՝ 320 կամ 640 էջ: — ՄԵՆՈՒ-
ԹԻՆ՝ 27.5 × 19.5 հրդմ.: — ԳԻՐ՝ բոլորգիր, մի-
ջին մաքրութեամբ: — ԳՐՈՒԹԻՆ՝ երկսիւմակ,
20 × 11.5 հրդմ.: սիւմակաց միջեր եղած բացու-
քիւնն է 1.5 հրդմ.: — ՏՈՂՔ՝ 18—20: — ԼՈՒ-
ՍԱՆՑԱՋԱՐԳՔ՝ բոլոր 200: — ԽՈՐԱՆՔ՝ բոլոր 4:
— ԹՈՒՂԱԳԻՐՔ և ԶԱՐԳԱԳԻՐՔ ևն, ամեն գլխոյ
սկզբնատեղի: — ԳԱՏԱՐԿ՝ ք. 1ա—4ա, 6ք, 7ա,
8ք, 9ա, 10ք, 11ք, 12ա, 96ք, 97ք, 153ք. և ք. 320:
— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր պահուած: — ՅԵՇԱՍԱ-
ԿԱԳՐՈՒԹԻՆՔ՝ ք. 65ք, 96ա, 152ա, 247ք, 318ա,
319ա: — ԺԱՄԱՆԱԿ ԳՐՁՈՒԹԵԱՆ՝ ՌԳ (= 1555): —
ԳՐԻՉ՝ Ստեփաննոս երէց: — ՏԵՂԻ՝ կը քուի քէ
կեսարիա է: — ՏԵՐ՝ Մանուէլ Սարգիս, և այլն: —
ՏԵՂԵԿՈՒԹԻՆՔ՝ խորանք, եզերագործ, բոլորը-
վին անմուտ ձեռաց գործեր են, ինչպէս նաեւ քրոջ-
նագիրք և զարդագիրք: Ամեն համարաց սկզբնա-
տեղիքն են գլխագիր կարմիր մելան:

Մատենան է՝ Աւետարան:

1. Թ. 4ք—5ա. խորան Եւսեբի:
2. Թ. 5ք—12ք. խորանք համաձայ-
նութիւն:
3. Թ. 13ք. Պատկեր Մատթէոսի, բո-
լորովին անհմուտ ձեռաց գործ:
4. Թ. 14ա. Աւետարան Մատթէոսի:
5. Թ. 97ա. Աւետարան Մարկոսի:
6. Թ. 151ք. Աւետարան Ղուկասու:
7. Թ. 248ա. Աւետարան Յովհաննու:

ՅԵՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՆՔ.

1. Թ. 65ք. Զմեղապարտ գրողս զՍտե-
փաննոս երէցս, և զճնողսն իմ, զՊապն,
զփոխեալն առ Քրիստոս, զմայրս զԹամարն
և Կողակիցս եմ, Թուրքման. և զոր-
դիս իմ զՄուսէսն, և զՆորոգէսն, և
զՄկրտիչն, և զղուստրն իմ զՄարթայն,
աղաչեմ, յիշել ի տէր, և Աստուած զձեզ
յիշէ յիւր ողորմութիւնն:

2. Թ. 96ա. Ով սուրբ հարք իմ և եղ-
բարք ընթերցողք սուրբ աւետարանիս, յի-
շեալիք ի մաքրութեայ յաղաթն ձեր զանար-
ժան քահանայս զՍտեփաննոս զրիչս, և
Քրիստոս Աստուած զձեզ յիշէ յիւր սուրբ
յարքայութիւն ամէն: Ով սուրբ քահանայք
յորժամ ընթերցողք զսուրբ աւետարանս յի-
շեալիք ի յաղաթն ձեր և զստացող սուրբ
Աւետարանիս զմահտեսի Սարգիսն և Պո-
ղոսն և զՊետրոսն և զմահտեսի Ասլին, և
զամենայն յարք:

3. Թ. 152ա. Զստացող սուրբ աւետա-
րանիս զմզգեսի Սարգիս, և մզսի Պողոսն,
և մզսի յԱսլին, և զՊետրոսն, և զմահ-
տայն յարեան մերձաւորսն յիշեալիք ի Քրիս-

տոս և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայու-
թիւն:

4. Թ. 247ք. Կատարեցաւ սուրբ պա-
տեիրանս փրկչին սրուժ ցանկացեալ էի,
և զիւր աւարտունս սուրբ այսմ վայրի վճե-
ռամք յոյնայմեզ զրէիս սուտանուն Ստե-
փաննոս յերիցու, որդւոյ Դաւթին փոխեալ
առ Քրիստոս և Թամարին: Եւ Աստուած որ
մեծն է ողորմութեամբ ողորմեայ ստացողի
սուրբ աւետարանիս մահտեսի Սարգիսն, և
մահտեսի Պողոսն և զՊետրոսն և զմահտեսի
յԱսլին և զամենայն յարեան մերձաւորսն և
այլն: Դարձեալ աղաչեմ զձեզ ով Աստուա-
ծարեալ հարք և եղբարք յիշման արժանի ա-
րարէք խնդրողիս և յիշատակելոցն անս՝
և ձերին սուրբ յաղաթ, զրեցաւ ի թվա-
կանութեան հայոց ՌԵ (1556):

5. Թ. 318ա. (Գլխաւոր յիշատակա-
րան): Փառք...: Տարտամս յամենայնի և
վարանկեալս մեղաք տառապեալս ոգի Ստե-
փաննոս ցանկացաւ և զիւր եղեալ եղեմարուիս
քաղցրաճաշակ և քառահոս աղբիւրս և
յոյնաշան թախանձանաւք զրեցի: Ծնորձիւն
Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին
կատարեցի զսուրբ աւետարանս ճշմարիտ և
յրնտիր աւրինակէ ի պայծառութիւն սրբոյ
եկեղեցւոյ և ի փառս Քրիստոսի, ՌԳ,
(= 1555) ամի թուականիս հայոց, ի ժամա-
նակս Աստուածապատիւ հոգեւոր տեառն
Սաղաւոր հայոց կաթողիկոսի, և թագաւո-
րութեան տաճկաց սուլտան Սուլայմանին:

6. Թ. 319ա. (Պատմականորէն երկար
յիշատակարան մը կայ, զոր զժախտարար
օրինակած չեմ):

14.

ԱԻԵՏԱՐԱՆ

249 = 1317:

ԿԱԶՄ՝ ինն արեւելեան, տախտակեայ կաշե-
պատ. մերձին երկու երեսներուն ինն կտու փակ-
ցուած է: — ՆԻԹ՝ բուլք զեղնագոյն, կակուղ և
փայլուն. շատ գործածուած է: — ՄԵՆՈՒԹԻՆ՝
23 × 16 հրդմ.: — ԳԻՐ՝ բոլորգիր, մաքուր սեւ
մելան: — ԹՈՒՂԹՔ՝ 392 կամ 784 էջ: — ԳՐՈՒ-
ԹԻՆ՝ երկսիւմակ, 16.5 × 10.5 հրդմ.: սիւմակաց
միջեր եղած բացութիւնն է 1 հրդմ.: — ՏՈՂՔ՝ 18:
— ԼՈՒՍԱՆՑԱՋԱՐԳՔ՝ և մանր պատկերք, ամեն
գլխոյ սկզբը, բայց տեղ տեղ աւրուած են: — ՊԱՏ-
ԿԵՐՔ՝ ք. 3ք. միւսները մկրատուած են: — ԽՈ-

ՐԱՆՔ՝ ք. 4ա, ք. 116ա: — ԹՈՒՂԱԳԻՐՔ և ԶԱՐ-
ԳԱԳԻՐՔ կան բաւական, կապտագոյն, մոլայեւ ա-
մէն համարներու գլխագիրք կապտա մելան են: —
ԴԱՏԱՐԿ՝ ք. 1—2, 3ա: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւա-
կանք մաքուր պահուած է: — ՅԵՇԱՍԱԿԱԳՐՈՒ-
ԹԻՆՔ՝ ք. 112ք, 184ք, 385ք—386ք, 390ք: —
ԺԱՄԱՆԱԿ ԳՐՁՈՒԹԵԱՆ՝ ԶԿԶ (= 1317): — ԳՐԻՉ՝
Գրիգոր երէց: — ՏԵՂԻ՝ Սիւ, ընդ հովանաւ Ս.
Գրիգորի Լուսաւորչին: — ՏԵՐ՝ Դաւրեցի Կոստան-
դին քահանայ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՆՔ՝ մատենիս սկիզ-
բն ու վերջը մէջ մէկ մագաղաքի այ պահպանակներ
կան երկարագիր գրուած:

Մատենան է՝ Աւետարան:

1. Թ. 4ա. Աւետարան Մատթէոսի: —
«Գիրք Ծնունդեան Յիսուսի Քրիստոսի, որդ-
ւոյ Թաւթի որդւոյ Աբրահամ», զարդա-
ղիր են:
2. Թ. 113ա. Նախագրութիւն, ցու-
ցակք զլիսոյ Մարկոսի Աւետարանի:
3. Թ. 116ա. Աւետարան Մարկոսի.
«Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի.
որպէս և գրեալք յեսայի», զարդաղիր են,
և այս թուղթը մագաղաթեայ է:
4. 185ա. Նախագրութիւն, ցուցակք
սուրբ աւետարանին Ղուկասու:
5. 189ա. Աւետարան Ղուկասու, «Քան-
դի բազումք յաւթաբեցան վերստին կար-
դեր» զարդաղիր են, այս թուղթն ալ մա-
ղաղաթեայ:
6. Թ. 299ք. Նախագրութիւն, ցու-
ցակք սուրբ աւետարանին Յովհաննու:
7. Թ. 302ա. Աւետարան Յովհաննու.
«Ի սկզբունէ է՛ր բանն: Եւ բանն է՛ր առ
Աստուած, և Աստուած էր բանն»: զարդա-
ղիր են, և այս միակ թուղթն ալ մագաղա-
թեայ. կը վերջանայ 386ա:
8. Թ. 387ա. Քարոզ Կիրակէի և յա-
մենայն ժամու կարգան և աւրհներդ զԱս-
տուածն ամէն:

ՅԵՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՆՔ.

1. Թ. 112ք. Ով անբուխարմ ծոցըդ
բան, որ ծաղկեցար յաղգրս մարդկան, և
մեզ զնորձրս քո շրթան, հեղեր աւր-
հնայրդ յաւիտեան: Դու զստացողքս քո
տառի, և զյարդարաւոյ այս մատենի, զկոս-
տանդին տէր քո հաւտի, զրեա յերկնային
զիր մատենի, և զեղեկելի զրիչս Գրիգոր:

2. Թ. 184ք, Ի յեզր և յաւարտ ան-
սպառ և զանմահութիւն մարդկան աւետո-
ղայ Աստուածապատում և սքանչելագործ
գործոց Քրիստոսի աւետարանիս որ յԱս-

տուածարեալ աւետարանէն ճառի բանից
Մարկոսի, Աստուածային ընթերցողք տառի
յիշեալիք զարի մշակն Աստուծոյ, զան-
ձանձիրն յընթերցումն զկոստանդին ընտիր
քահանայ և զրծնողս իւր և զամենայն ազ-
գասոհմ, և զիս զեղեկելի զրիչս Գրիգոր
մեղաւոր երէց, և զճնողսն իմ, և զուսու-
ցիչսն իմ, և զուր յիշեալ լիջիք ի Քրիս-
տոսէ...:

3. Թ. 385ք. (Գլխաւոր յիշատակա-
րան). Փառք...: Զորքն աւետարանիչք զայս
ամենայն զորով աւանդեցին աշխարհի, որոց
Աստուածամուկ բանից զրեւ արժանի արար
զիմս անարժանութիւն, քանզի սկսեալ կա-
տարեցի զզիրս աւետանուն ի թուականիս
Հայոց ԶԿԶ (= 1317), ի թագաւորութեանն
Հայոց բարեպաշտին Աւշինի, և ի հայրապե-
տութեան տեառն Կոստանդեայ հեղի և ողոր-
մածի, ի մայրաքաղաքս Սիւ, ընդ հովանաւ
սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, ձեռամբ ան-
արհեստ գրչի Գրիգորի մեղաւոր երիցու, ի
խնդրոյ աստուածահաճոյ և առաքինաջան
քահանային Կոստանդեայ որ մականունն սուրբ
Դաւթեցի կոչի, որ ստացաւ զսա յարգար
վաստակոյ իւրոց ի վայելումն անձին իւրոյ,
և յետ ելից յիշատակ յաւիտեանս իւր՝ և
իւրոցն ամենայնի: Արդ ևս ստացաւ սուրբ
այս տառի, ջերմ հոգւով փափաքեցի և
զրեւ ետու ի քարտիսի, յընթերցումն որչափ
յատուի, և յետ ելից ժառանգ բարի, ինձ և
իմոցն ի վախճանի, նախ Կոստանդին քահա-
նայի որ մականունն սուրբ Դաւթեցի, լիցի և
հաւրն եմ Միխայիլ, և մեծ մանուկ իմ
Ալիքի, ևս ծնողի մաւրն իմ երունի, որ
Մարեմթագ վերածայնի, և մեծ աղբարն իմ
Յակոբի, որ փոխեցաւ ի հանգրստի, յայս
կենցաղոյս որ անցանի, յանանցն որ կայ
միշտ ևս պահի, ևս ամուսնոյն եմ Տիրուհի
որ Ծահանդուխտ անունն ասի, և հարազատ
եղբար նորին ննջեցելոյն Յահաննիսի: Արդ՝
ով մանկունք նոր սիրովի, հայցեմ սիրովի
Յիսուսի, զմեզ առնել միշտ արժանի, զհո-
գիքս մեր պատարագի, և ի ձեռն ում իսկ
սա անկցի, տեսեամք կամ զիր զաղա-
փարի, յիշել մաղթեմ անրոս... (մնա-
ցեալքն կը պակսի):

4. Թ. 390ք. (այլ գրիչ), Արդ՝ զրե-
ցաւ Կիրակէի քարոզս, և կաղմեցաւ սուրբ
աւետարանս ի զեղաքաղաքն ի Տոմարգձայ
ի ձեռամբ անարժան Գրիգորի քահանային

որ եմ լցեալ մեղաւք ի մէջ անցաւոր աշխարհին, ո՛ր թէ զառնա մահ մեղաւորիս եւ լինի անաշտ, ահեղ գատաստանին ով գերոյս եւ ողորմելիս ստացէք, ողորմածն Աստուած է ողորմի ինձ եւ ձեզ ամենեցուն, եւ ի թզին ՌԻԱ. (ՌԻԱ. (= 1572) ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Պետրոսին, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տէր Յովանէս եպիսկոպոսն եւ զուսուցիչն իմ զԱստուածատուր վարդապետն. Աստուած իւրեանց փոխարէն վարձա հարուցանէ ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս. Շիր քահանայն եւ զորդին զԹորոս քահանայն որ ետուր ի հալալ ընչեցն եւ ետ կապել սուրբ աւետարանս իւրեանց հոգւոյն յիշատակ: «Վերուստ յոհանն. ի գիշերի Ղուկաս, ուղղէ Մարկոս, գտանէ մաթէոս:

(Կան նաեւ այլեւայլ գրչերով գանազան մանր նոր յիշատակարաններ են, որոնք այնպիսի տկար գրչաց զիր են որ կարդալը դժուարին է, եւ տառասխալներն ալ շատ):

(Շարունակելի:)

ԿԵՕՉԷՑԵՆՆ ԳԵՐԳԵՍՏՈՆԵՐ

(Շարունակութիւն:)

Քէօջէկ Օղլու Յակոբի որդի Անտոն եւ իր Տիկինը՝ Տիրուհի օրհնուած են 10 զաւակներով, Յովսէփ, Մարիցա, Պետրոս (Բեդրակ), Պոզոս, Միքայէլ, Իսկուհի, Երանիկ, Թագուհի, Սոփիա եւ Յակոբ: Պատրիարքարանի Դիւանին մէջ արձանագրուած են միայն հետեւեալները. Յովսէփ, Պետրոս, Պոզոս, Յակոբ, Միքայէլ, Երանիկ եւ Սոփի: Ամբողջ ցանկը պահած է Տիկ. Մարիամ Նազը:

Տիկ. Մարիամ կ'ըսէ որ Անտոնի մահէն վերջ իր զաւակները բաժնուեցան Պոլսոյ զանազան թաղերուն մէջ. Յովսէփ՝ Գաւրգիւղ, Պետրոս՝ Օրթագիւղ, Պոզոս՝ Բերա, Յակոբ՝ Թոփգափու, եւ այլն: Ինչպէս պիտի տեսնենք՝ Պոլսոյ այլ եւ այլ անկիւններէ մէջ ալ տուններ կամ ամասանոցներ չինած են յետոյ: Իրենց գլխաւոր աշխատանոցը Վալաքիա էր, ուր Կէօջէկեանք Կեօմբիւֆ ձաքքէսիի վրայ «Կէօջէ Օղլու Խան»ը ունէին: (Յ. Գ. Փալազաշեան, Տեղագրութիւն Կոստանդնուպոլսոյ եւ շրջակայից եւ Յաւելուած Կ. Պ. 1887, էջ 57):

Այժմ խօսինք կարգաւ Անտոն Կէօջէկեանի մասին:

1. Յովսէփ. — Ծնած է 1808ին եւ ունեցած ազգային դործունէութիւն: 1854ին կը ներկայանայ Կէօջէկեան Գերդաստանի գլուխներէն մին եւ Ազգին գործերուն մէջ առաջնակարգ դեր կատարող անձ (Հմմտ. Յ. Ասկերեան, Պատմութիւն, անդ, էջ 359):

Թէեւ Կէօջէկեանները Հասունեան խընդիւններու մէջ ընդհանրապէս անդիներուն յարած էին, սակայն 1875էն սկսած իրենց մէջ շարժում մը ծայր կու տայ դարձի եւ կատարեալ յարումի Հռոմի եւ անոր հաւատարիմ անձերուն: Մեր Հ. Մանուէլ Տէվրիշեան կը գրէ Պոլսէն. «Զատկին խթման պատարագին Քէօջէկ Յովսէփ եփ. մեծ տղով ներկայ գտնուեցաւ՝ մէկալ կողմանէ գգուած ըլլալով» (Դիւ. 1875 Ապրիլ 27):

1836ին Կէօջէկեան Տունը մասնաւոր պատիւ մը ընդունած է Սուլթանէն: Թէ ի՞նչ էր այդ պատիւը եւ ո՞վ յատկապէս պատուողը՝ չկայ ստուգութիւն: Մեր Հ. Անտոն Դանեան, որ Կէօջէկեանց խոստովանաւորն է՝ նամակի մը մէջ աճապարելով ուրախ լուրը տուած է սա լակոնական ոճով, նպատակ ունենալով յետոյ մանրամասնութեամբ գրելու. «Քէօջէկեանք պատուեցան յարգալէ, զորմէ գրեցից...» (Դիւ. 1836 Յուլիս 20): Յետոյ մոռցած է սակայն գրել:

Ինչպէս առհասարակ Կէօջէկեանք՝ նոյնպէս անհատաբար Յովսէփ Կէօջէկեան մեծահարուստ մարդ եղած է: Բերա Աղաճամիի մօտ Կէօջէկեանք 2000 կանգուն մեծութեամբ գետին մը ունէին, որուն վրայ չորս կրպակներ կային: Երկիրը կը վերաբերէր Կէօջէկեան Բնկերութեան, որոնց մէջ կը յիշուին Յովսէփ Աղա, Յարութիւն եւ Յակոբ: Գետինը կ'արժէր 650,000 դուրուշ (Դիւ. 1850 Յունի. 10):

Յովսէփի բնակարանը Գաւրգիւղ էր: Հոս է որ 1883 Փետր. 14ին կը կնքէ մահկանացուն: Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, Բերա (Թէրմ. Էփֆեար, 1883 Թ. 1644): Շիշլիի գերեզմանատան մէջ Յովսէփի իր ընտանեկան դամբարանը ունի ս'ա վերատառութեամբ.

Ընտանիք

Յովսէփ Կէօջէկեան

(Քօսեան, անդ, էջ 79):

Կարճ, բայց լի իմաստով սա գովեստը կը կարդանք իր մասին. «...այր պատուական յոյժ» (Դիւ. Վիենն. Միսիթ. 1855 Դեկտ. 13):

Յովսէփ Կէօջէկեան ամուսնացած էր Լիւսի (Լուչիքա) Տաւուտեանի (Եղորդաղջիկ Կարապետ Արքիմ Տաւուտ Փաշայի) հետ: Տիկ. Լիւսի մեռած է 1880 Մարտ 12ին, որուն առիթով նամակ մը կը տղէ. «Յաւուրս յայտարարեմ հանդեալ ի Տէր տիկին Յովսէփի էփ. Քէօջէկեանց Լուչիքա, որ երբեմն դրօշակիրն էր ի մէջ կանանց Անդի կողմանէ եւ յամաց ինչ հետէ դարձեալ յայս կողմն եւ մեռաւ ի ձեռն Dr. Giov. Ժողովրդապետի եկեղեցւոյն Հոգւոյն Սրբոյ եւ յուղարկաւորեցաւ ծանու հանդիսիւ ի մերմէ կողմանէ: Գեր. Հոգեւոր Տէրն յետ գնալոյն ի Գլխոյն Վէս ի տուն Պոզոս Էփ. իի Քէօջէկեան, վախճանելոյ անդի, չոքաւ եւ առ եղբայր Բարա Յակոբ Էփ. եւ բազում մեծարանօք ընկալեալ եղեւ յրմտանեացն եւ ի Հ. Պոզոսէ Լիւրանանցւոյ» (Դիւ. 1880 Մարտ 10):


Յովսէփ եւ Լիւսի ունեցած են երեք մանչ եւ երկու աղջիկ. Անտոն, Գրիգոր, Յովհաննէս, Նեկտար եւ Սուրբիկ: — ա) Անտոն մնացած է ամուրի. մահուան թուականը անհայտ է: — բ) Գրիգոր եւ իր եղբայր Յովհաննէս առաջին աշակերտներն են Վիեննական Միսիթարեանց Պոլսոյ մէջ 1857ին բացած Գիշերօթիկ վարժարանին 9 գիշերօթիկներէն, ուր արձանագրուած են. Գրիգոր Քէօջէկեան, Յովհաննէս Քէօջէկեան, արդիւք Յովսէփ Քէօջէկեանի (Նամակ Հ. Մանուէլ Տէվրիշեանի, 1857 Դեկտ. 16): Հ. Մանուէլ այդ նամակին մէջ կը գրէ Գեր. Պոզաճեանին. «Ակն ունիմք եթէ օրհնութեամբ Տեառն եւ աղօթիւք Ձերովք ոչ միայն սոքա պարծանք լինիցին Միաբանութեանս, զի գրեթէ ամենեքին մանկունք ընտիրք են, սրամիտք...» (Անդ):

Գրիգոր եւ Յովհաննէս սովորական ուսումէն զատ՝ մեր քով դաշմակի դաս ալ առած ըլլալով՝ 1858ի դպրոցական հանդէսի ժամանակ նուագած են թէ՛ առանձին եւ թէ à 4 mains (Դիւ. 1858 Օգոստ. 1):

Գրիգոր եւ Յովհաննէս յետոյ իրենց ուսումը շարունակած են Պարիսի Մուրատեան վարժարանի մէջ, ուր զրկած է զիրենք իրենց հօրեղբայր՝ Յակոբ Կէօջէկեան՝ ընկերացնե-

լով Պոլսէն մեր Հայերէն մին: 1865ին դեռ հոն էին (Դիւ. 1865 Յունիս 2):

Գեղարուեստի սէրը, զոր արքայացած էր Պոլսոյ մեր վարժարանը Գրիգորի սրտին մէջ՝ ծիլ արձակելով կը զարգանայ յետոյ՝ պարարտ հոգ զանելով Գրիգորի մէջ, որ ապագային կը դառնայ տաղանդաւոր անուանի նկարիչ մը: «Կարտադրէ, կը գրէ Արմենակ Սազըզ, 1876ի տետները եւ որ Համոյի Պէյի հետ, Պոլսոյ առաջին նկարչական սալոններէն միոյն՝ 1881ի ցուցահանդէսին գըլ-



ԳՐԻԳՈՐ ԿԵՕՉԷՑԵՆՆ
(ՆԿԱՐԻՉ)

խաւոր ցուցադրողը եղաւ: Հալիլ Խոսէֆ կ'ըսէ թէ այս արուեստագէտը նպատած է նաեւ քիւֆի գրեթէ թուրքիոյ մէջ տարածման... Հայ Գեղարուեստական Միութիւնը ձեռք անցուցած էր Կէօջէկ-Օղլուի գործերէն ծաղիկի երկու իւղաներկ ուսումնասիրութիւններ եւ մատիտով աշխատուած երկու դիմանկարներ, արուեստագէտին քրոջ եւ մօր դիմանկարները: Այս վերջին դէպքը, պատկերագրական մասնաւոր շահեկանութիւն մը կ'ընծայէ, որովհետեւ ան կը ներկայացնէ բարեկեցիկ քաղաքի հայ տիկինը» (Արմենակ Սազըզեան, Անանիտ, Փարիզ 1933 Թ. 1-2, էջ 35-65):

Արմենակ Սազըզ տուած է նաեւ Գրիգորի մօր եւ քրոջ՝ Օր. Նեկտարի — նկար-